

ԱՐԱՄ Ա. ԸՆԴՈՒՆԵՅ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԵՒ ԱՆԳԼԻՈՅ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ

Արամ Ա. կաթողիկոս երկ Անթիլիասի վեհաբանին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Անգլիոյ դեսպան Ռիչարդ Քինշլընը: Ան եկած էր յանուն Անգլիոյ վարչապետի 26-րդ հարկաւանդին յայտնելու վեհափառին բերած մասնակցութեան համար վարչապետին ու Անկլիան եկեղեցւոյ պատիւին կողմէ կազմակերպուած քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան: Գետախնդիր շնորհակալութիւնը յայտնեց նաեւ Լոնկոնի հանդիպումէն ետք վեհափառին յարաբարած գրութեան համար, ուր կ'արտացոլայ Արամ Ա. ի տարակերպումը քրիստոնեայ-իսլամ երկխօսութեան մասին:

Նոյն օրը, վեհափառ հայրապետը նաեւ ընդունեց այցելութիւնը Լիբանանի մօտ Հունգարիոյ նոր նշանակուած դեսպան Փէյլ Ֆառլիանին, որ ծանօթացման իր առաջին այցը կը կարգադրէր կաթողիկոսարան: Հանդիպման ներկայ գտնուեցան նաեւ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան:

Շուրջ ժամ մը Գեղամ խօսակցութեան ընթացքին արծարծուեցան Լիբանանի այժմու կացութիւնն ու հայ համայնքին երկրի քաղաքական, կրթական ու մշակութային կեանքէն ներս ունեցած մասնակցութեան առնչուած հարցեր: Գետախնդիր նաեւ ունենալ վեհափառին կարծիքը միջազգային ընկերակցութեան կարգադրման մասին, նկատի ունենալով Արամ Ա. կաթողիկոսի միջազգային լայն փորձառութիւնը յայտնելու միջ-եկեղեցական շրջագիծէն ներս: Վեհափառը փառաբանեց մեծաքանակ դեսպանը այս հարցին գծով, յարկաւոր միջեկեղեցական շրջանակներէ ներս փարսուող աշխարհակերպութեան մասին:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԲԱՅՈՒՄ՝ ...

Շարունակուած Ա. Էջէն



Գրադարանէն անկիւն մը:

րատ, պատկան մարմիններու ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն մը:

Խօսք առաւ քոյճի տնօրէն Յակոբ Բագրատունի, որ խօսեցաւ ժողովրդային գրադարանի բացման նշանակութեան մասին, ժամանակաշրջանի մը մէջ, երբ ժողովուրդն ու երկիրը կը դիմագրաւեն բազմաթիւ դժուարութիւններ տնտեսական մակարդակի վրայ: Ան ըսաւ, որ նիւթը դարձած է հիմնական գործոն մարդոց միջեւ յարաբերութիւններուն մէջ եւ մշակութային համաշխարհայինացումը մարդը կը պարպէ իր յատկանիշներէն, քաղաքակրթութիւններէն, իրենց իւրայատկութիւններէն, իսկ ժողովուրդները՝ իրենց աւանդութիւններէն:

Յ. Բագրատունի շնորհակալութիւն յայտնեց Ստեփան Ապաճեանի, տարբեր երկիրներու դեսպանատններուն, Պորժ Համուտի քաղաքապետարանին եւ բարեկամներու, որոնք նպաստեցին գրադարանի սարքաւորման աշխատանքին: Ան մասնաւորաբար շնորհակալութիւն յայտնեց մշակութային հարցերու ղեկավար Դաստան Սալամի՝ նախարարութեան անունով գրադարանի պատրաստութեան աշխատանքին համար յատկացում կատարելուն համար:

Այնուհետեւ խօսք առաւ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպ. Խաչերեան, որ շինիչ նկատեց այս գրադարանի բացման նախաձեռնութիւնը, եւ յայտնեց, որ աւելի քան 120 հազար գիրքերէ բաղկացած գրադարանը ոչ թէ գիրքի պահեստարան է լոկ, այլ՝ իրագործում մը նշեալ կրթական հաստատութեան կեանքին մէջ: Ան վեր առաւ նաեւ գիրքին կարեւորութիւնը մարդկային ընկերութիւններու պարզացման գործընթացին մէջ:

Վերջին խօսողը եղաւ նախարար Դաստան Սալամի, որ յատուկ կերպով շնորհակարարեց Պորժ Համուտի մէջ ժողովրդային գրադարանի բացումը:

Ան յայտնեց, որ կառավարութիւնը իրեն յանձնած է Պէյրութի մէջ կայանալիք արաբական վեհաժողովի կազմակերպման աշխատանքները, սակայն, հակառակ իր բազմապարզ ըլլալուն, երբեք առիթը չի փայտցնել նոր գրադարաններու բացման մասնակցելու համար, որովհետեւ ինչ որ Լիբանանը կը յատկանշէ

անոր հողին ընդերքին մէջ գտնուող քիչ պաշարները չեն, այլ նախ եւ առաջ մարդը:

Ասկէ մեկնելով ան շեշտեց մարդակերտ ման աշխատանքին կարեւորութիւնը, որովհետեւ քաղաքացիական պատերազմի տնտեսութեան, լիբանանցի մարդը իր կրթութեամբ, իր պատկառելիքով եւ իր մշակութային եւ պատմական անհատականութեամբ վնաս կրեց: Հետեւաբար հասած է ժամանակը սկսելու ոչ միայն երկրի ենթակառուցվածքը, այլ նաեւ վերնակառուցվածքը վերականգնման:

Նախարար Դ. Սալամի աւելցուց, որ ինք

եկած է ոչ միայն գրադարանի բացում կատարելու, այլ անգիր համաձայնութիւն մը կնքելու քոյճի տնօրէնութեան հետ. համաձայնութիւն մը, որ աւելի եւս կ'ամրապնդէ նախարարութեան եւ քոյճի միջեւ գոյություն ունեցող յարաբերութիւնները: Այս ժրիրին մէջ նախաբար խոստացաւ, որ գրադարանին օժանդակելու աշխատանքը պիտի չմնայ կատարուած յատկացումի սահմաններուն մէջ:

Գրադարանի բացման առիթով արտասանուած պաշտօնական խօսքերէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ԻՍՐԱՅԷԼԻ ՀԵՏ ԳՈՐԾԱԿՑՈՂՆԵՐՈՒ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹԻՒՆ

Չինուորական քննիչ դատախաչ Ռիտա Թալիի երկ հարցաքննեց արգելափակուած Ռատուան Հաժը, Իմատ Ռըրը եւ Մոհամեդ Ապի Մըլիմը, որոնք ամբաստանուած են Իսրայէլի հաշուոյն լրտեսական գործունէութիւն տարած ըլլալու յանցանքով:

Թալիի մնալ հարցաքննեց, ապա արգելափակել տուաւ Հասան Հաշմը, որ ամբաստանուած է միեւնոյն ցանցին մաս կապմամ ըլլալու յանցանքով:

Լրատու աղբիւրներ հաղորդեցին, որ վերջինը «Ամալ» շարժումին մաս կապմամ է եւ անկէ դուրս դրուած է:

ՎԱՆԱՅ ՉԱՅՆ ՎԱՆԱՅ ՉԱՅՆ
Այսօր՝ Շաբաթ, 2 Մարտ, կէսօրէ ետք ժամը 1:00ին, կրնաք լսել մեր հարցալրոյցը հեղինակային երգերու մեկնաբան, հայրենի արուեստագետ
ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ հետ:
● Հարցալրոյցին կրկնութիւնը կէսօրէ ետք ժամը 4:40ին:

ՎԵՀՎՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՄԷՉ ՄԻՋԻՆՔԻ ԱՌԻԹՈՎ
Ուրախութեամբ կը յայտնենք մեր սիրելի ժողովուրդին, որ Լիբանանի Հայոց Առաջնորդ ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ հրաւերով վեհափառ հայրապետը՝
Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
յառաջիկայ Գործըջաբքի, 6 Մարտ 2002ին, Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ պիտի նախագահէ Արեւազալի հանդիսաւոր արարողութեան եւ ապա պիտի տայ իր հայրապետական պատգամը:
Օրուան երգեցողութիւնը պիտի կատարեն Դպրեվանքի սարկաւազ եւ ժառանգաւոր սաները:
Առաւօտեան ժամերգութիւն ժամը 8:00ին
Լրեւազալ ժամը 9:00ին
Քարոզ ժամը 9:30ին
Կոչ կ'ուղղենք հաւատացեալ մեր ժողովուրդին՝ ներկայ ըլլալու Արեւազալի հոգեթով արարողութեան եւ լսելու վեհափառ հայրապետին պատգամը:
ԴԻՒՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

ԱՐԱՄ Ա. ՊԵՐՏ ՖԱՉԼԵԱՆԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

«Վահրամ Փափագեան» թատերախումբի Հիմնադիր՝ կր բեմադրէ բազմաթիւ թատերախաղեր: 1976ին կը հաստատուի Մոնթրէալ, ուր կը հիմնէ «Հայ Բեմ» թատերախումբը: Ապա կը վերադառնայ Լիբանան, ուր կը շարունակէ իր գործունէութիւնը:

Պ. Ֆազլեան նաեւ գործօն դերակատարութիւն ունեցած է լիբանանեան թատերական կեանքին ներս: Իր բազմամեայ գործունէութեան ընթացքին բեմագրած է աւելի քան 100 թատերախաղեր:

Ապա խօսք առաւ Ժիրայր Դանիէլեան, որ արժեւորեց մեծարեալը եւ հայ թէ՛ օտար թատերական արուեստի աշխարհէն ներս անոր ունեցած մեծ ներդրումը: «Պերտ Ֆազլեան եղաւ այն բեմադրիչն ու դերասանը, որ յատկանշուեցաւ իր բնութեամբ եւ տալիք ունեցող արուեստագէտ», ըսաւ ան:

Ապա յանդիմանաբար արարեցինով եւ Ֆրանսերէնով խօսք առին բեմադրիչ Ժալալ Խուրի, դերասան Հուսէյն Էմիլ Պուստանի, բեմադրիչ Անթուան Սուլթանը եւ Անտոն Սաասէ, որոնք իրենց սրտի խօսքը ուղղեցին մեծարեալին: Անոնք վեր առին իր բեմադրութեան բնութեան թմբակը, որովհետեւ արուեստագէտ Պերտ Ֆազլեանի ներկայացուցած արժէքը, վկայեցին անոր տաղանդին մասին, եւ մասնաւոր շեշտը դրին լիբանանեան բեմին մատուցած անոր ծառայութեան եւ լիբանանեան թատրոնի ոսկեդարին մէջ անոր ունեցած անգնահատելի ներդրումին վրայ:

Հանդիսութեան ընթացքին նաեւ խօսք առաւ մեծարեալը, որ իր երախտագիտութեան ու շնորհակալութիւն խօսքը ուղղեց Արամ Ա. Հայրապետին, իր մասին արտայայտուողներուն, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք նեցուկ կանգնած են ու նպաստած են

Շարը՝ էջ 10

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Նուպար Չօրէքեանի եւ դուստրը՝ Լուսին
Տէր եւ տիկին Երուսանդ Չօրէքեանի եւ զաւակը՝ Արի Օրդ. Արփիլի Թասէճեան
Տէր եւ տիկին Հայկ Թասէճեան
Տէր եւ տիկին Վարուժան Թէյպէլեանի եւ դուստրը Տիկին Անահիտ Պաղտասարեանի եւ զաւակունքը Խոսրով եւ Հրայր Չօրէքեանեաներ
Տէր եւ տիկին Լեւոն Ղոչախեանի եւ զաւակունքը Տիկին Մարի Կոչախեանի եւ զաւակունքը Տէրտէրեան ընտանիք
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց մօր, մեծ մօր, գարմուշիկն եւ հարազատին՝

ԼՈՒՍԱԾԻՆ ԶԷՕՐԷՔԵԱՆԻ (ԾՆԵԱԼ՝ ԹԱՍԷՃԵԱՆ)

մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 1 Մարտ 2002ին, Շիքաօ, Մ. Նահանգներ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի Շիքաօյի մէջ:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահալոյ:
● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին պակին՝ Երուսանդ Չօրէքեանի բնակարանը, Անթիլիաս, «Շուսուֆեան» շէնք, 11րդ յարկ, Շաբաթ 2 եւ Կիրակի 3 Մարտին:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Սրբուհի Գազէգեանի եւ զաւակները՝ Լուսին եւ Ստեփան
Տէր եւ տիկին Վահէ եւ Կարինէ Քէօսէեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Բաֆֆի եւ Նազիկ Գազէգեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Յակոբ Գազէգեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Հրանդ Գալէմբէրեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Յակոբ Տէր Պետրոսեանի եւ զաւակունքը Ունճեան ընտանիք
Տիկին Եղիսարէթ Տէֆտրտարեանի եւ զաւակունքը եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային եւ հարազատին՝

ԻԱՉԻԿ ԳԱԶԷՉԵԱՆԻ (ԾՆԵԱԼ՝ 1935ԻՆ)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 1 Մարտ 2002, առաւօտեան ժամը 1:00ին, սրտի տագնապի պատճառով:

Յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ուրբաթ, 1 Մարտ, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Մարաշի Սրբ. Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պորժ Համուտի Ազգային գերեզմանատունը:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահալոյ:
● Յուսակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Նոր Մարաշ, «Գալեկեան» շէնք, Շաբաթ 2 եւ Կիրակի 3 Մարտ 2002ին:

Շ. Բ. Բ. Պ. Գ. ԿԱՐՄԻՐԵԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԿԱՐԺԱՐԱՆ
ՇՐՋԱՆԱԲԱՐՏԻՑ ՍԻՈՒԹԻՆ
ՅՈ՞ ԵՐԹԱՍ ՀԱՅ ԴՊՐՈՅ...
Կրտսեակ գրոյցին կը մասնակցին՝
**ՆՈՐԱ ՍՐԻԱՇԵԱՆ
ՇՐՋԱՐԱՆԱԲԱՐՏԻՑ
ԱՐՄԵՆ ԻՌՈՒՆԵՆԵԱՆ
ՍԵՊՈՒՆ ՄՆԱՃԵԱՆ**
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 15 Մարտ 2002, երկուշաբթի ժամը 8:00ին, Պողոս Գ. Կարմիրեան միջնակարգ վարժարանի հանդիսարանին մէջ:
ՇՐԱԿԵՐ

ՄԱՀԱԶԴ

Հ. Յ. Դ. «Տիգրան Ծամուր» Կոմիտէն կը գուժէ իր շրջանի հաւատարմ ընկերներէն՝

ՅԱԿՈԲ ՍԹԱՆՊՈՒԼԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 25 Փետրուար 2002ին, Պանքոքի մէջ (Թալէնտ), յետ կարճատեւ հիւանդութեան:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Մարալ Սթանպուլեանի եւ դուստրը՝ Գրիսիին
Տէր եւ տիկին Սարգիս Պապիկեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Շանթ Կարապետեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Զօհրապ Սթանպուլեանի եւ զաւակունքը
Տիկին Արգիշտի Գասպարեանի եւ դուստրը
Տիկին Մարի Աւագեան
Տէր եւ տիկին Մկո Գիրիքեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Յակոբ Օճաննէսեանի եւ զաւակունքը
Տէր եւ տիկին Յակոբ Մետրոպեանի եւ զաւակունքը
Եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, փեսային եւ հարազատին՝

ՅԱԿՈԲ ՍԹԱՆՊՈՒԼԵԱՆԻ (ԾՆԵԱԼ՝ 1956ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 25 Փետրուար 2002ին, Պանքոքի մէջ (Թալէնտ), յետ կարճատեւ հիւանդութեան:

Հանգուցեալին մահուան յիշատակի արարողութիւնը պիտի կատարուի Կիրակի, 3 Մարտ 2002ին, Նոր Ատանայի Ս. Կատուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:
● Ներկայս ընդունիլ իբրեւ մահալոյ:
● Յուսակցութիւնները կ'ընդունուին տիկին Արգիշտի Գասպարեանի բնակարանը, Ամանու:

ԱԶԳԱՅԻՆ Գ. ՉԱԹԱԼՊԱՇԵԱՆ - ԹՈՐԳՈՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄԻ ՍՈՒՆԱՔ
ԱՅՍՕՐ՝ ՇԱԲԱԹ, 2 ՄԱՐՏ 2002,
Երկուշաբթի ժամը 8:00ին, Ս. Յակոբ
Եկեղեցւոյ «Տիգրան Պապիկեան» սրահին մէջ: Կառատուը ապահովուած:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԻ ԵՐԵԿՈՅ
ՄԵԿԱՐԱՆՈՒԹԵԱՄՔ՝
ԱՐՄԷՆ ՄՈՎՍԻՍԵԱՆԻ

ՄԻ ՍՈՒՆԱՔ
ՎԱՐԸ՝ ԿԻՐԱԿԻ, 3 ՄԱՐՏ 2002,
Երկուշաբթի ժամը 6:00ին
«Յովհաննէս Պողոսեան» սրահին մէջ:

Ճանօթ.- Տոմսերը ստանալ «Կանայ Զայն»-էն, Համագայինի գրախանութն, դպրոցի քարտուղարութենէն եւ ելոյթի օրերը կիշէն:

ԱՐՏԱՔԻՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ՊԵՏՔԵ ԽՈՐՀՐԴԱԿՅԻ ԻՐ ԴԱՇՆԱԿԻՅՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Կ'ԸՍԵ ՓԱՐԻԶ

ՓԱՐԻԶ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Ֆրանսայի ընկերվարական կառավարությունը Ուրբաթ օր թափ տուած է Մ. Նահանգներու վրայ ճնշումներուն, յայտնելով, թէ անոնք պէտք է իրենց դաշնակիցներուն հետ խորհրդակցին արտաքին քաղաքականութեան գծով:

Օր մը առաջ մինչ այդ, նախագահ Ժաք Շիրաք պնդած էր, թէ Փարիզ Ուաշինկթընի հետ նոյն «ալիք»ին վրայ կը գտնուի:

Արտաքին գործոց նախարար Իսպիր Վետրին, որ ամերիկեան քաղաքականութիւնը «պարզունակ» կոչած էր, յայտնած է, թէ Ուաշինկթըն պէտք է ահաբեկչութեան դէմ իր պատերազմին մէջ տարբեր կեցունածք մը որդեգրէ: Անիկա յաւելելով պատասխանատուութեան կոչ

Շարք' էջ 10

ԿԻՊՐՈՍԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ

ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՎԵՐՍՎՍԱՆ

ՆԻԿՈՍԻԱ, 1 (ՌՈՅԹԸՐԸ)- Կիպրոսի խաղաղութեան բանակցութիւնները Ուրբաթ օր վերսկսած են 1 օրուան դադարէ մը ետք:

Կիպրոսի նախագահ Կլաքոս Բլեթիտէս եւ թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշ շուրջ երկու ժամուան տեսակցութիւն մը ունեցած են Նիկոսիոյ մէջ ՄԱԿի մէկ կեդրոնին մէջ՝ լրատու աղբիւրներու լուսարձակներէն հետո:

Բանակցութեան ընթացքին թափ տրուած է նկատի ունենալով Կիպրոսի Ե. Միութեան հաւանական մտաւորութեան անդամակցութիւնը եւ Տենքթաշի հիւսանքները: Այս վերջինը Չորեքշաբթի օր յայտնած է, թէ 6էն 12 ամիսէն կրնայ սրտի վիրաբուժութեան կարիք ունենալ:

Յոյն կիպրական աղբիւր մը յայտնած է, թէ Ուրբաթ օրուան հանդիպումին՝ տեսակէտներ

Շարք' էջ 10

ՎՐԱՍՏԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐ ԱՌԱՔԵԼՈՒ ԾՐԱԳԻՐԻՆ ՆԿԱՏԱՍՔ

ՓՈՒԹԻՆ ԿԸ ՄԵՂՄԱՅՆԷ ՄՈՍԿՈՒԱՅԻ ԿԵՅՈՒԱԾԵՐ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փուտին երէկ Կազանի մէջ մտնելով Մոսկուայի կեցուածքը՝ Վրաստան ամերիկացի զինուորական մասնագէտներ զրկելու ծրագիրին գծով, որ անիկա «ողորբերգութիւն մը» չէ Ռուսիոյ շահերուն համար:

Վրաստանի մէջ Ա. Ղ. Հասարակապետութեան ղեկավարներու վեհաժողովին մամուլի ասուլիսի մը ընթացքին խօսելով, Փուտին ըսած է. «Անիկա ողբերգութիւն մը չէ եւ չի կրնար ըլլալ»:

«Ինչո՞ւ անոնք (ամերիկեան ուժերը) պիտի կարենան Կեդրոնական Ասիոյ մէջ ըլլալ, սակայն ո՛չ Վրաստանի», հարց տուած է ան, ակնարկելով ամերիկեան ուժերու անցեալ տարեկերջին Կեդրոնական Ասիոյ մէջ հաստատումին:

Փուտինի այդ արտայայտութիւնները, որոնք կատարուած են թղթակցութեամբ, մինչ ան վրաստանի նախագահ Էտուարտ Շեւարտնաձէի եւ ԱՊՀի այլ ղեկավարներու կողմէն կը կանգնէր, կը հակասէր Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի խօսքերուն:

Իվանով այս շարքով խօսած էր, թէ Վրաստան ամերիկեան ուժեր զրկելու ծրագիրը չըջանի մէջ ապահովութեան կացութիւնը աւելի ծանրակշիռ կը դարձնէ:

Սակայն ան երէկ իր կեցուածքը մեղմացուցած է, յայտնելով, որ Վրաստան գերիշխան պետութիւն մըն է եւ իրաւունք ունի Մ. Նահանգներու եւ միջազգային կազմակերպութիւններու դիմելու՝ միջազգային օժանդակութիւն պահանջելու համար:

Ան կը խօսէր Հոռոմի օդակայանին մէջ թղթակցութիւններով:

Իվանով, որ Իտալիա կը գտնուի երօրեայ յայտնութեան մը համար, յայտնած է, թէ ամերիկացի զինուորներու Վրաստան ժամանակը «կրնայ ձեւով մը՝ Վրաստանի մէջ կացութիւնը դժուարացնել»:

Փուտին, որ Մալթի Մոսկուայի մէջ տեսակցութիւն մը պիտի ունենան նախագահ Ճորճ Պուլի հետ, իր կարելին ըրած է Ուաշինկթընի հետ ջերմ յարաբերութիւններ հաստատելու համար:

Շարք' էջ 10

ԵԹԸ «ԵՐԵՎԱՆԻ ԴԱՅՄԱՆՆԵՐԸ» ԱՌԿԱՅ ԸԼԼԱՆ

ԼՈՆՏՈՆ ԶՕՐԱՎԻԳ ՊԻՏԻ ԿԱՆԳՆԻ ԻՐԱՔԻ ԴԵՄ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ

Բրիտանիա երէկ յայտարարեց, որ պորպիզ պիտի կանգնի Միացեալ Նահանգներուն կողմէ Իրաքի դէմ պինտորական որեւէ գործողութեան, այնքան ատեն, որ «ճիշդ պայմանները» առկայ են: Պաշտպանութեան նախարար ձէֆ Հուն Կլեյնը, որ Իրաքի դէմ գործողութեան մը ձեռնարկելու որեւէ որոշում չէ որդեգրուած տակաւին Ուաշինկթընի կողմէ: Սակայն ան դիտել տուաւ, որ Իրաք պէտք է ենթարկուի ՄԱԿի այն որոշումներուն, որոնք կ'առնչուին հաւաքական քանդումի պէնթերուն:

Հունի յայտարարութենէն մէկ օր առաջ, Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյրի բանբերը ըսած էր, որ ահաբեկչութեան դէմ պատերազմին մէջ «տրամաբանական» յաջող քայլը պիտի ըլլայ ձեռքապատիլ իրաքեան սպառնալիքին: Բանբերը ակնցուցած էր, որ Սատամ Հիւսէյնի կառավարութիւնը կը շարունակէ հաւաքական քանդումի պէնթեր արտադրել:

Միւս կողմէ, Իրաք պատասխանեց ամերիկեան ու բրիտանական ամբաստանութիւններուն, յայտարարելով, որ պատրաստ է մուտքի արտօնութիւն տալու բրիտանացի քննիչներու, եթէ Բրիտանիա ըսէ, թէ ճիշդ ո՛ւր կ'արտադրուին հաւաքական քանդումի պէնթերը: Կառավարութեան մէկ բանբերը շեշտեց, որ Իրաք պատրաստ է իր դռները բանալու քննիչներուն դիմաց, եթէ Պլեյր ըսէ, թէ ո՛ր եւ չ'որ կը պատրաստուին այդ պէնթերը:

Ամերիկացի բարձրաստիճան պաշտօնատար մը իր կարգին յայտնեց, որ Ուաշինկթըն սկսած է փաստեր հաւաքելու Սատամ Հիւսէյնի պատերազմի ճիշդութեան մասին: Փետ Ռիշար Փրոսպերը ըսաւ, որ եռանդամ յանձնախումբ մը յառաջացուած է յիշեալ աշխատանքը տանելու: Ան ակնցուց, որ Սատամ էն անոր բանակին բարձրաստիճան պինտորականները պէտք է հաշի տան իրենց գործած ոճիւրներուն մասին:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը ամէն օր առաւտեան ժամը 9:00Ե կէսօրէ ետք ժամը 5:00 կ'ընդունի դիմումներ՝ հետեւեալ ծառայութիւններուն համար:

- 1) Հիւանդանոցային առողջապահական (ուիզաքա) եւ պետական հիւանդանոցային բուժում):
- 2) Ընկերային Ապահովութեան Ազգային Սնտուկ (Տաման):
- 3) Ծանր եւ երկարատե բուժման կարօտ հիւանդութիւններու դեղորայքի ապահովում:
- 4) Գաղթականներու նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 5) Բնակարանային հարցերու նախարարութեան (հսլէտ) դիմումներ:
- 6) Աշխատանքի նախարարութեան հետ առնչուող հարցեր:
- 7) Զաղաքապետութիւններու հետ կապուած հարցեր:
- 8) Ընդհանուր Ապահովութեան Ապասրկութեան (Ամն Էլ Ամ) հետ կապուած հարցեր:

Դիմողները պէտք է ներկայանան «Ճաղոցեան» կեդրոն, երկրորդ յարկ, Երեսփոխանական Գրասենեակ եւ կամ նախքան ներկայանալը հեռաձայնել 01-259881 եւ 01-242582 քիւերուն:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հայկական Երեսփոխանական Գրասենեակը լիբանանահայ քուէրկողներուն կը տեղեկացնէ, թէ նոր քուէրկողներու անուանացանկեր (լուստի շաքրայ) հրապարակուած են ներքին գործոց նախարարութեան կողմէ: Այն բաղաբաղները, որոնք 2000ի երեսփոխանական ընտրութիւններուն չկրցան քուէրկել՝ անունի կամ այլ սխալի պատճառով, նախարարութեան որոշումով իրաւունք ունին մինչեւ 11 Մարտ 2002 կատարել սրբաբոլորները:

Սրբաբոլորները եւ ստուգումները կատարելու համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, «Ճաղոցեան» Մշակութային Կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01-259881:

Դիմողները պարտին իրենց հետ ունենալ իխրած քայտի լուսապատճէն մը:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵՐԵՍՓՈՒՄԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ԱՍՏՈՒՎԾԱՇՈՒՆԻՉԻ ԵՒ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹԱՅՄԱՆ ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՆԵՐ

Անթիլիասի, Ժունիէի, Չալքայի եւ շրջակայքի Ս. Յարութիւն եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը կազմակերպած է Աստուածաշունչի եւ հայ եկեղեցւոյ պատմութեան ծանօթացման դասախօսական երեկոներ: Պիտի դասախօսէ շրջանի հոգեւոր հովիւ՝ ԽԱՉԻԿ ՔՆՆՅ. ՄԻՍԻՐԵԱՆ:

Դասախօսական երեկոները պիտի կատարուին Մեծ Պահոց Ուրբաթ օրերը, 15 Փետրուար 2002էն սկսեալ, հսկումի ժամերգութեանէն ետք, եկեղեցւոյ սրահին մէջ, ժամը 7:00-8:30:

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՍԻՐԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՍՏԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ (ՀԵՂՈՍ)

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Նիւթ՝ Թ. Վ. Ա.

Չեկուցաբեր՝ ՊՐ. ԱԼԻ ՖԱԵԻԸ

(ԿՐՄԳ հաշուեքննիչ հաստատութենէն լիբանանեան տուրքերու մասնագետ)

Տեղի կ'ունենայ այսօր՝ Շաբաթ, 2 Մարտ 2002, երեկոյեան ժամը 6:00ին, ՀԵՂՈՍԻ կեդրոնատեղիին մէջ, Անթիլիաս:

365 ՕՐԵՐԷՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Այս ձեռնարկին հետեւեալ հաստատութիւնը կը ստանան օրուան մը ճաշի ծախսը՝ 300 տոլար:

Գամագեան եւ Մարտիրեան հաստատութիւն՝ 4 Մարտ:

ՏՈՍԹՈՒՄ ԾՐԱՆ ՄԸ ԿԸ ԳՐԱԻԷ

Աֆղանիստանի մէջ մինչ այդ, ըստ աֆղան «Էյ. Այ. Փի.» լրատու գործակալութեան, հիւսիսային շրջանի աֆղան պատերազմի «իշխան» եւ պաշտպանութեան փոխ նախարար Վարապար Ապտիլ Ռաշիտ Տոսթումի հաւատարիմ ուժերը երկ կարծակած եւ գրաւուած են ռազմավարական կարեւորութիւն ներկայացնող Մալարի-Շարիֆ քաղաքին հարաւը գտնուող բանալի շրջան մը:

Ուժերը Շուկարա շրջանին մէջ յարձակած են հրամանատար Աթթա Մոհամէտի հետեւորդ ուժերուն վրայ, մինչ Աթթա կ'ուզէր Շուկարա շրջանին հակակշիռը դարձեալ ապահովել՝ Տոսթումի հետ բանակցութեանց ճամբով, ըստ «Էյ. Այ. Փի.»ի:

(ՌՈՅԹԸՐԸ)

THE CULTURAL HOUR @ HAIGAZIAN UNIVERSITY in coordination with the U. S. EMBASSY PUBLIC AFFAIRS SECTION cordially invites you to a lecture on CONTEMPORARY ARAB WOMEN WRITERS by PROF. MIRIAM COOKE Haigazian University Auditorium - Kantari Thursday, March 7, 2002, - 7:00 P. M.

ՀԱՅ ԱՐՈՒԵՍԱԳԵՏՆԵՐՈՒ ԴԱՍԱԽՍՐՈՒՄ 225Դ ԶԱՆԴԻՊՈՒՄ - ԶՐՈՅՑ «ԱԿՆԱՐԿ ՍՓԻՌՔԱԶԱՅ ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ» Դասախօս՝ արուեստաբան ՄՈՎՍԷՍ ՀԵՐԿԵԼԵԱՆ Տեղի կ'ունենայ Երկուշաբթի, 4 Մարտ 2002, Երեկոյեան ժամը 7:00ին, «Կարտըն Թատրոն» պանդոկի սրահին մէջ: Հեռաձայն 04 / 417741 www.gardentowerhotel.com/MondayForum.htm

ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ FUEL CARD-Ը

Ձեր ինքնաշարժից պենզին, մագնիս, իւրից, ինչպէս նաեւ լուալու համար, վճարումին հետ միաժամանակ ներկայացուցէ FUEL CARD-ը, այս ձեւով ձեր մասնակցութիւնը բերած կ'ըլլաք տնտեսական ծրագիրներու յաջողութեան:

ԻՆՉՊԵՍ ՍՍԱՆԱԼ FUEL CARD-Ը

FUEL CARD-ը կրնաք ստանալ հետեւեալ կեդրոններէն: • ԱՅԿԻԼԻ գրասենեակ, Պոլորճ Կամուտ • Կամ մագնիսի գրախմուտ, Պոլորճ Կամուտ • Գրատուն Caravelle, Չալքա • Գրատուն Sava, Այնճար • Գրատուն Կոմիտաս, Պէյրուք • Obelisk հաստատութիւն, Անթիլիաս



FUEL CARDԸ ԿՐՆԱՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ՀԵՏԵԿԱԼ ԿԱՅԱՐԱՆՆԵՐՈՒՆ ՄԵՋ

1. CORAL JAL EL DIB, Ժէ Էլ Տիպ
2. HYPKO ANTELIA, Կարապ Ալ Դաուարնէ
3. SPEED ANTELIA, Կարապարանի դիմաց
4. CORAL BAABDAT, Պապուտէ մայրուղի
5. SPEED ACHRAFIEH, Էլ Նահր PEUGEOT ընկ. առաջ
6. HYPKO HAMRA, Պանք Տի Լիպաննէ առաջ
7. MEDCO KARAMTINA, Զարանքնայի մայրուղի
8. CORAL SHAMOUN, Դամասկոսի մայրուղի
9. CORAL MAR MIKHAEL, Մար Սիլիայի, Սաստ պողոտայ
10. SPEED ALITIHAD, Կալեթի Իքթիսա
11. MANAR FANAR, Ֆանար, Նաւոր պանդոկին կից
12. CALTEX ANJAR, Այնճար
13. BASSIL DORA, Տորայի կամուրջ
14. ՀԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Տորա, «Այմագա»ի կից
15. ՍԱՐԳԻՍԵԱՆ ԿԱՅԱՐԱՆ, Պոլորճ Կամուտ, Սիւ Էլ Ֆիլի մայր պողոտայ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 քիւին:

Մագնիսի սպասարկութեան համար հեռաձայնել՝ 04-715111, 04-715222 եւ 04-715333 քիւերուն:

ՔԱՐՏԸ ԿԸ ՍՍԱՆԱՔ ԶՐԻՕՐԵԼ ԱՐԺԷՔՄԻՈՐ ՆՈՒԷՐՆԵՐ ԵՒ ԻՆՔՆԱՇԱՐԺ ՄԸ

Գրական Էջ

ՎԱԻԵՐԱԿԱՆ ՀԱՏՈՐ ՄԸ՝ «ՔԱԼԻԼԱ ԵՒ ՏՈՒՄՆԱ»

Մ փիւռքի տարածքին ներկայիս գրեթե լուրջաբան դասակարգում հայ բարգամանական գրականութիւնը, որ արեւմտահայ գրականութեան դարաւոր հռչակը զուգահեռապարհաբար հարուստ հանգրուաններ յատուկ երանգ եւ աշխուժութիւն գումարելով Մաշտոցի հիմնադրած բարգամանական ուսանելի աւանդներուն վրայ, վերջերս հարստացաւ վաւերական գործով մը, երբ «Գեորգ Մելիտիոսեան» Գրական Մրցանակի իբր 49րդ հրատարակութիւն՝ հայ ընթերցողին հրամցուեցաւ Ապտալիա Իպի էլ - Մուգաֆֆահի անուան կապուած «Քալիլա եւ Տումնա» կամ «Պիտիայի առակագիրքը» խորագրեալ հատորը, Ներսէս Յ. Պարսումեանի թարգմանութեամբ։ Մփիւռքի մեր մշակութային կեանքի միակերպ իրագործումներէն մէկը հանդիսացող վերոնշեալ գրական մրցանակը, որուն աւելի քան 30ամեայ կեանքին վերջին տարիները յատկանշուեցան ընդգծելի աշխուժութեամբ՝ 1998էն առկին հրատարակելով 15 հայերէն եւ 5 ֆրանսերէն ու անգլերէն խորագրերով հատորներ, այսպէսով, նաեւ բացուեցաւ մեր անմիջական միջավայրին, Բարգէն Ջանոյեանի «Արարական գրականութիւնը եւ հայերը» հատորին վրայ գումարելով ոչ միայն արարական, այլեւ միջազգային գրականութեան գլուխ - գործոցներէն մէկը համարուող «Քալիլա եւ Տումնա»:

Ներսէս Յ. Պարսումեանի բնաբան թարգմանութեամբ հայագրութեան 283 էջերէ, կը բացուի թարգմանիչին բացատրագիրով, որուն կը յաջորդէ 37 էջերու վրայ երկարած ու «Ներածական» խորագրով ներկայացած ծաւալուն ու համապարփակ ուսումնասիրութիւնը։ Առակագրութեան եւ անոր ակնադրութեան հանդիսացած այս հատորին ծննդոցն ու պատմական հոլովոյթը մեծապէս բնաբանութեամբ պատկերած իր այս աշխատասիրութեամբ՝ Ներսէս Յ. Պարսումեան կու տայ ապացոյցներ հարցներու բոլոր դիտարկումներէն մտնող մտաւորականի իր լրջութեան։ Առակայական տուեալներու վրայ իր խօսքը հիմնաւորող գրականագետի մը վրայ լրջախոնդութեամբ ան համար կ'ելլէ «Քալիլա եւ Տումնա»-յի սանկրիտ կորսուած բնագիրէն եւ հաւանական աղբիւրներէն, բնորոշ մանրամասնութիւններէ կ'անցնի պահլաւերէն եւ արաբական տարբերակներէն (հատորին անդրահիկ թարգմանութիւնը, որ իր կարգին կորսուած է՝ ինչպէս հնդկերէն բնագիրը), որպէսզի 570ին հին առերեւեալ թարգմանուած ըլլալը յիշատակելէ ետք, հանգամանորէն ծանրանայ 750ին «առակագրութեան ակնադրութիւնը»

արարացուցած անուանի արարարական գիրքին ստեղծագործ վաստակին վրայ, որ շնորհիւ «առակներուն մէջ արտայայտուած մտածումներուն, գաղափարներուն եւ խորհրդածութիւններուն հանդէպ իր հոգեկան յագեցումով զարգացող աշխատանքին» յաջողած է առակներուն տալ հեղինակային շունչ ու ոճ։ Ա. յն աստիճան, որ կարգ մը գրականագետներ «Քալիլա եւ Տումնա» կը նկատեն ոչ թէ սոսկական թարգմանութիւն մը, այլ՝ Իպի էլ - Մուգաֆֆահի կուռ ոնով ու յաւերժացողով անձնականացուած հեղինակային ստեղծագործութիւն մը։

Այս հաստատումը կատարելէ ետք, Ներսէս Յ. Պարսումեան սեղմ, բայց բնորոշ գիծերով կը ներկայացնէ մեծաւ մասամբ արարեւեկէ կամ արարեւեկէ կատարուած թարգմանութեան մը երրորդ յետի մը փոխադրուած միւս թարգմանութիւնները՝ ասորերէնի, պահլաւերէնի, քրքերէնի, եբրայերէնի, Մալաբարի հնդկերէնի եւ եւրոպական տասնեակ մը լեզուներու։ Ապա, ան կանգ կ'առնէ հայ առակագրութեան, այսինքն՝ մէկ կողմէ՝ Վարդան Այգեկցիի եւ Մխիթար Գօշի գրականութեանց եւ, միւս կողմէ՝ Իպի էլ - Մուգաֆֆահի խնդրոյ առարկայ հատորին վրայ, որպէսզի հասնի այն անվիճելի եզրակացութեան, որ Այգեկցիի ու Գօշի առակները ոչ մէկ առնչութիւն ունին «Քալիլա եւ Տումնա»-յի հետ, մինչեւ Լաֆոնթէն լայնօրէն օգտուած է արար արականագիրին գործէն, ֆրանսացի պիւնկարի արեւելագետներու իսկ հաստատումով։


Ուսումնասիրութեան վերջին բաժինով, լուսարձակի տակ կ'առնուի կ'գիրքին հեղինակի ու գործին իրերայաջորդ գլուխները։ Այնուհետեւ Ներսէս Յ. Պարսումեան կը շեշտէ Աւետարանէն ետք ամենէն շատ կարդացուած գուարնալի, բայց միաժամանակ նոյն յարան իմաստակարար այս աշխարհագրական հատորին բարոյա-քաղաքագիտական եւ իմաստասիրական արժեքը, եզրակացնելու համար արդարօրէն, որ միջազգային գրականութեան բացառիկ գանձերէն մէկը եղող «Քալիլա եւ Տումնա»-յի «առակները ընկերաքաղաքական ու բարոյագիտական մտածումներ բանաձեւելու համար գրուած համեմատելի են»։

Մէկ շունչով է անմոռելի կան ըմբռնելով կարդացողը անման հատոր մը։ Աւելի ճիշդ՝ կեանքի յաւերժական օղակներուն պէս իրարու բացուող եւ գիրար հարստացող, վրական գոհարներ, որոք իբրեւ վրայելք, կեանքի ուղեցոյց, իմաստութեան շտեմարան ու խոկումի գեղեցիկ առիթ՝ յապաղած, բայց ոչ ուշացած այսօր կը հրամցուին հայ գրասէր հասարակութեան։

Ս. ԿՐԻՍՏՈՍԵԱՆ



Փարիզի Ազգային Գրադարանին մէջ գտնուող ԺԳ. դարու Մեմլուքեան մանրանկարներ:



Փարիզի Ազգային Գրադարանին մէջ գտնուող ԺԳ. դարու Մեմլուքեան մանրանկարներ:

ՄԱՐԴՈՒՆ ԵՒ ՎԻՇԱՊԻՆ ԱՌԱԿԸ

Մարդուն այս վիճակը ինծի յիշեցունց հետեւեալ առակը.

- Կատողած փիղէ մը վախցած մարդ մը, իրրեւ ապաստանարան, կը գտնէ ջրհոր մը, որուն բերանին վրայ երկարած ծառի մը ճիւղին կառչելով՝ մէջը կը կախուի։ Ոտքերը ջրհորի ստնաեղբրուն մէջ դնելէ ետք, վար կը նայի եւ կը տեսնէ չորս օձեր, որոնք իրենց բոյներէն իրենց գլուխները դէպի իրեն տնկած են։ Ջրհորին յատակին կը տեսնէ վիշապ մը, որ դէպի իրեն բացած է բերանը։

Յետոյ աչքը վեր կը դարձնէ եւ կը տեսնէ, որ ծառին ճիւղին վրայ կան երկու մուկեր, սեւ ու ճերմակ, որոնք անդու կը կրծեն իր կառչած ճիւղը։

Այս բոլորը տեսնելով, ան կը սկսի մտածել, թէ ինչ պէտք է ընէ, որպէսզի ազատի։ Մինչ այդ, իր մօտ կը նշմարէ խորիխ մը մեղր, գոր պատրաստած էին մեղրուները։ Ախորժակը կը բացուի, կը փափաքի քիչ մը ուտել։ Մեղր ուտելու փափաքը զինք կը գրադեցնէ եւ իրեն մոռցնել կու տայ չորս օձեր գտնելու եւ այդ վիճակէն ազատելու մտածումը։ Ան կը մոռնայ, որ երկու մուկեր տակաւին անդու կը կրծեն իր կառչած ճիւղը, որ շուտով կը կտրուի, եւ ան իր մտացիրով թանջ ու անհոգութեան հետեւանքով կ'իյնայ ջրհորին յատակը, ուր զինք կը լափէ վիշապը։

Եւ ջրհորը կը նմանցնէ մաշտոցի, որ լեցուն է ապականութեամբ, չարիքով, փորձանքներով եւ վախով։ Չորս օձերն ալ կը նմանին մարդու մարմնին մէջ գտնուած չորս հիմնական նիւթերու, որոնցմէ որեւէ մէկը երբ գրգռուի՝ կը նմանի օձի խայթոցի եւ մացուց թոյնի։ Երկու մուկերը կը ներկայացնեն գիշերն ու ցերեկը, որոնք իրարու յարողեղով, մուկերուն ծառին ճիւղը անդադար կրծելուն պէս, կը կրծեն մարդուն օրերը ու կը փճացնեն կեանքը, որ մեր ամբողջն է։

Վիշապը կը նմանի մահուան, որմէ փախուստ չկայ։ Մեղրն ալ կը նմանի քաղցրութեան, գոր կը վախել մարդ՝ հոտոտելով, ուտելով, լսելով եւ շօշափելով։ Ասոնք զինք կը գրադեցնեն եւ իրեն մոռցնել կու տան իր անձը եւ իր հոգիին փրկութեան գործը։

Այսպէսով, եւ եկայ այն եզրակացութեան, թէ վիճակէս պէտք է գոհ ըլլամ եւ իմ աշխատանքովս գայն բարեկարգեմ, որքան որ կարենամ։ Կեանքիս մնացած օրերուն կը յուսամ գտնել առիթներ, որոնք պիտի հաստատեն, թէ ճիշդ է ընթացքս, տէ՛րն եմ անձիս եւ հոգացած եմ իմ մասին։

Ապրեցայ այս պայմաններուն մէջ եւ Հնդկաստանէն երկիրս վերադարձայ՝ ընդօրինակելէ ետք Հնդկական շատ մը գիրքեր, որոնցմէ մէկն է այս գիրքը։

ՁԿՆՈՐՄԻՆ ԵՒ ՈՍՏՐԷՆ ԱՌԱԿԸ

Ամէն օր, ձկնորս մը իր նաւակով ծովախորշ մը կ'երթար եւ հոն ձուկ կ'որսար։ Օր մը ջուրին յատակը տեսաւ ոստրէ մը, որուն խեցին կը փայլէր ու կը շողար։ Թանկարժէք գոհար մը կարծեց գայն, բայց ուռկանը ջուրը նետեց, բռնեց ձուկ մը, որ կրնար ապահովել իր օրապահիկը։ Ձգեց ձուկն ու ուռկանը, նետուեցաւ ջուրին մէջ եւ դուրս բերաւ ոստրէն, բայց անոր մէջ չգտաւ իր ակնկալածը։ Ձղջայ իր ազահութեան համար եւ շատ ցաւեցաւ ձեռքը անցած կորստեցուցած ըլլալուն պատճառով։

Յաջորդ օրը փոխեց իր տեղը, նետեց ուռկանը եւ բռնեց փոքր ձուկ մը։ Հոն ալ տեսաւ փայլուն խեցիով ոստրէ մը, սակայն անտեսեց՝ անպէտք է ըսելով։ Անոր երթալէն ետք, ուրիշ ձկնորսներ եկան, հանեցին այդ ոստրէն եւ անոր մէջ գտան թանկարժէք մարգարիտ մը։

Ձգէտ մը անոնք՝ որոնք չեն խորանար այս գիրքին բովանդակութեան մէջ, չեն հաներ իմաստներուն մէջ թաքնուած իրատները, այլ կը գոհանան միայն մակերեսային ընթերցումով։

Ան՝ որուն հետաքրքրութիւնը միայն հաճելի պատմութեանքներն են, կը նմանի անոր, որ կ'ունենայ բերրի եւ ազատ հող ու աւտոյժ հունտ, կը ջրէ ու կը ցանէ, սակայն երբ բերքը կը հասնի, կը գրադի ծաղիկ քաղելով եւ փուշ հաւաքելով ու կը կորսնցնէ աւելի օգտաւէտ բերքը։

ԳԻՐՔԻՆ ԱՐԱԲԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆ ՈՒԹԻՒՆԸ

Իպի էլ - Մուգաֆֆահի արարացած պարսիկ մըն էր, քաջահամուտ՝ արաբներին եւ պարսիկներին։ Ան անհրաժեշտ օմայաւանութեան հետ եւ ակնատեսեղած է անոնց անկուսի մին՝ Արաբաստաններուն ձեռքով։ Տեսած է վերջիններուն կիրարկած անգթութիւնները, որոնց զէմ իր հոգիին մէջ եռացող ըմբոստութեան լաւագոյն արտայայտիչը գտած է «Քալիլա եւ Տումնա» գիրքը։ Երբ ան ձեռք անցուցած է գիրքին պահլաւերէն օրինակը, ապրուստով փարած է անոր թարգմանութեան։ Առակներուն մէջ արտայայտուած մտածումներուն, գաղափարներուն եւ խորհրդածութիւններուն հանդէպ իր հոգեկան յագեցումով գար-

գացող աշխատանքը թարգմանութեան տուած են հեղինակային շունչ։ Ան աւելցուցած է նոր պատմութեանքներ, ոչ թէ գիրքը ճոխացնելու նպատակով, այլ՝ գոհացում տալու համար իր ներաշխարհը յուզող խնդիրներուն, որոնք վարագործուած արտայայտութեան յարմարագոյն միջոցը գտած է այլաբանութիւնը։ Այլ խօսքով, «Քալիլա եւ Տումնա» գիրքին մէջ, Իպի էլ - Մուգաֆֆահի անհրաժեշտ լեզու տուած է, ինչպէսզի լուր համար հաճածանքներէ եւ սոգէտ շրջապատի դատարարութիւններէն, մինչդեռ հնդկական բնագիրին մէջ, կենդանիներուն խօսելու կարողութիւնը համապատասխան է հնդկներու հոգե-

ՆԵՐՍԵՍ Յ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Կապիկը ըսաւ.

- Կը պատմուի, որ ծառայիտ անտառի մը մէջ կ'ապրէր առիւծ մը, հետն ալ՝ շնագայլ մը, որ կ'ուտէր առիւծին սեղանէն։ Առիւծը բորոտութեան բռնուեցաւ, շատ յոգնեցաւ, տկարացաւ եւ անկարող եղաւ որսի։

Շնագայլը իրեն հարցունց.- Ո՞վ արքայ, վիճակդ փոխուած է, ի՞նչ ունիս։

Առիւծը պատասխանեց.- Բորոտութիւնը, որմէ բռնուած եմ, դեղ չունի։ Միակ դարմանը իշու մը սիրտն ու ականջներն են։

Շնագայլը ըսաւ.- Ես գիտեմ էջ մը, որ կու գայ մեզի մօտակայ ջուրին քով։ Հագուստ եւ կտաւ ճերմկը նոյր ներկարարը կը բերէ էջը, բեռը վար կ'առնէ ջուրին քով եւ էջը կը թողու, որ արածի մարգագետինին մէջ։ Յոյս ունիմ, որ այդ էջը կրնամ բերել քեզի։ Բերելէս ետք քեզի կը թողում սիրտն ու երկու ականջները։

Առիւծը ըսաւ.- Շո՛ւտ ըրէ՛, մի՛ ուշանար։ Շնագայլը գնաց, գտաւ էջը եւ ըսաւ անոր.

- Ի՞նչ ունիս, ինչո՞ւ նիհար ես։

Էջը ըսաւ.- Տէրս կեր չի տար ինծի։

Շնագայլը ըսաւ.- Հապա ինչո՞ւ կը մնաս անոր հետ։

Էջը հարցունց.- Ի՞նչ կրնամ ընել։ Եթէ իրմէ փախչիմ, ո՞ր երթամ, մարդու ձեռք պիտի անցնիմ, բեռ պիտի կրեմ եւ անօթի պիտի մնամ։

Շնագայլը ըսաւ.- Ես քեզի ցոյց կու տամ մարդոց աչքէն հեռու տեղ մը, ուրկէ ոչ ոք կ'անցնի, արօտավայրը բերրի է եւ խոտը՝ առատ։ Հոն կայ նաեւ առիւծ մը, որ քեզ շատ կ'արօտցնէ։ Խոտը մը էջեր ալ կան, որոնց պէս անուշիկ ու զիրուկ էջեր ոչ ոք տեսած է։

- Ինչո՞ւ կը սպասեմք ուրեմն, հո՞ն երթանք,- ըսաւ էջը։

Շնագայլը եւ էջը միասին գացին դէպի առիւծին որջը։ Շնագայլը յառաջացաւ անտառին մէջ եւ առիւծին տեղեկացուց իշուէն եղած տեղը։ Առիւծը գնաց, մօտեցաւ իշուն, ուղեց վրան յարձակիլ, բայց տկարացած ըլլալով՝ չկրցաւ։ Էջը ազատեցաւ եւ սարսափահար բռնեց փախուստի ճամբան։

Երբ շնագայլը տեսաւ, որ առիւծը չկրցաւ բռնել էջը, ըսաւ անոր.

- Ո՞վ արքայ գազաններու, ա՞յս աստիճան ուժաթափ ես։

Առիւծը ըսաւ.- Եթէ անգամ մըն ալ բերես, պիտի չազատի ձեռքէս։

Շնագայլը գնաց իշուն քով եւ ըսաւ անոր.- Ի՞նչ պատահեցաւ քեզի, հոն գտնուող էջերէն մէկը նորեկ ըլլալը նկատել է եւ եկած է բարի գալուստ մաղթելու քեզի։ Եթէ տեղը մնայիր, հետո պիտի մտերմանար եւ քեզ պիտի ներկայացնէր իր բարեկամներուն։

Էջը, որ երբեք առիւծ չէր տեսած, հաւատաց շնագայլին խօսքերուն եւ անոր հետ գնաց մինչեւ առիւծին որջը։ Շնագայլը մտաւ առիւծին քով եւ հաղորդեց իշուն գալուստը։

Ան ըսաւ.- Պատրաստ եղիր, խաբեցի եւ ետ բերի էջը, չըլլայ որ այս անգամ տկարանաս, որովհետեւ եթէ այս անգամ ալ փախչի, ա՛յ չի վերագառնար։

Առիւծը հաւաքեց բոլոր ուժերը, մօտեցաւ իշուն, անակնկալի բերաւ գայն եւ մէկ ոստումով բզկտեց, յետոյ ըսաւ.

- Բիշկկները թելադրած են, որ լուացուելէ եւ մաքրուելէ առաջ պէտք է լուտել։ Ան շնագայլին յանձնարարեց, որ հսկէ մինչեւ իր վերադարձը։

- Կը վերադառնամ եւ կ'ուտեմ սիրտն ու երկու ականջները, մնացածը քեզի կը թողում,- ըսաւ շնագայլին։

Երբ Առիւծը լուացուելու գնաց, շնագայլը ցատկեց բզկտուած իշուն վրայ, կերաւ սիրտն ու ականջները։ Քիչ ետք առիւծը վերադարձաւ եւ ըսաւ շնագայլին։

- Ո՞ւր է իշուն սիրտը, ո՞րն են ականջները։

Շնագայլը ըսաւ.- Չգիտեմ, որ էջը ո՞չ սիրտ ունի եւ ոչ ալ ականջ։ Եթէ սիրտ ունենար՝ կը գգար, եթէ ականջ ունենար՝ կը լսէր, եւ անգամ մը, որ փորձանքէն ազատեցաւ, երկրորդ անգամ քեզի չէր վերադառնար։

Այս առակը պատմեցի քեզի, որպէսզի իմանաս, թէ ես այդ իշուն պէս չեմ, որ ըստ շնագայլին՝ ոչ սիրտ ունի եւ ոչ ալ ականջ։ Դուռն դաւեցիր եւ խաբեցիր զիս։ Ես ալ նոյն ձեւով քեզ խաբեցի եւ կեանքս կորուստէ փրկեցի։

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՇԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ


ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ




ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ «ՔԻՊՈՐՏ» ՄԸ



«Քիպորտ»-ները պատրաստված են արհեստագիտությունը հազուադեպ հաջողությամբ կր հրապարակել իւրաքանչիւր ստեղծարարի, պարզ աչքի պատճառով, որ երկար տարիներ է ի վեր բարեկարգուող այս սարքը աւելի եւս բարեկարգելը դիւրին է: Անթել «քիպորտ»ներէ եւ կիսաշրջանակաձեւ «քիպորտ»ներէն ետք, այժմ հրապարակ իջած է ձեռքի մկաններու հանգստաւէտութիւնը նկատի առնող «Կոլտթաչ» «քիպորտ», որ երեք կտորներու բաժնուած է՝ ձեռքի շարժումներու առաւելագոյն հանգստութիւն ապահովելու համար: Սարքը կ'արժէ շուրջ 200 տոլար:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ «ՍԻ. ՏԻ.» ՆԵՐ ՆՈՐՈԳՈՂ ՍԱՐՔ ՄԸ

Յաճախ կը պատահի, որ «սի. տի.»-ներ կը գծուին եւ անոնց պարունակած երգերը կը կորսնցնեն իրենց յատուկութիւնը եւ կամ բոլորովին կը դադրին նուագելէ:



Այս հարցին լուծումը կը բերէ վերջերս պատրաստուած սարքը, որ կը վերանորոգէ «սի. տի.»-ներու խանգարումներուն մեծ մասը՝ պարզ գործողութեամբ մը: Արդարեւ, բաւարար է «սի. տի.»-ն գետեղել սարքին մէջ եւ քանի մը անգամ գառնալէ ետք ան կը վերագտնէ ձայնի եւ պատկերի իր նախկին որակը:

Այս նոր սարքը կ'արժէ շուրջ 50 տոլար:

ՀԱՅ ՄԸ ՌՈՒՍԻՈՅ ԱՄԷԼԻՆ ԱԶԴԵՑԻԿ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԷՆԸ

Ռուսական «Քրամբրսն» հրատարակչատունը, «Թրանսլայթ» ծանուցումի ընկերութիւնը եւ Ռուսիոյ գործադիր տնօրէններու միութիւնը, տեղեկատուական արհեստագիտութեան մէջ գործող ընկերութիւններու հետ գործակցաբար, վերջերս պատրաստեցին Ռուսիոյ ամէնէն ազդեցիկ 100 գործադիր տնօրէններուն ցանկը, որուն առաջին դիրքը գրաւեց ռուսահայ Իկոր Աղամիրբեան, որ «Մայքրոսֆթ» ընկերութեան արեւելեան եւրոպայի գիտաշխատանոցներու հետ յարաբերութիւններու բաժանմունքին գործադիր տնօրէնն է:

Ամէնէն ազդեցիկ գործադիր տնօրէններու ցանկին 7րդ դիրքը կը գրաւէ այլ հայ մը՝ Պորիս Պապայեան, որ «Ելկուրս քեքնուրնի» ընկերութեան գործադիր տնօրէններու խորհուրդին ատենակալն է:

Պատրաստե՛ք՝ ԽԱՉԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ

ԱՉԳԱՅԻՆ ԱՐԳԱՐԵԱՆ ԿԱՐԺԱՐԱՆ

ՊԱՀԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԾԱՇԵՐՈՒ ՊԱԶԱՐ

Կազմակերպութեամբ՝
ԱԶԳ. ԱՐԳԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ


Տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, 6 Մարտ 2002, կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00, վարժարանի շրջափակին մէջ:

www.lemagan.com

ԹՐԲԱԿԱՆ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԹՐԲԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ

Հայկական ուսումնասիրութիւններու թրքական հիմնարկը, որ կը վայելէ Անգարայի իշխանութիւններուն հովանաւորութիւնը, վերջերս ստեղծուած հակահայ կառույց մըն է, որ կը նպատակադրէ միջազգային եւ ազգային մակարդակներու վրայ կազմակերպել ակադեմիական սեմինարներ, դասախոսութիւններ եւ գիտաժողովներ՝ ընդհանրապէս կողակասեան եւ յատկապէս հայկական հարցերու մասին:



Անգլերէնի եւ թրքերէնի բաժիններով հանրութեան ներկայացող այս կայքը կ'ընդգրկէ պատմութիւն, նենգափոխող թուրք փրոֆեսէօրներու հակահայ ուսումնասիրութիւնները՝ ցեղասպանութիւնը ժխտող եւ հայերը ջարդարար նկատող նիւթերով:

«Պուլաթ Թաճար», «Աշխարհաքաղաքականութեան եւ ինքնավարութեան ձգտում Զաւարթի հայութեան մօտ (Վրաստան) եւ Կրասնոտարի շրջանին մէջ (Ռուսաստան)» (Հասան Ճանպուլաթ), «Գլուխ - գործոց հակաքրոզիստիան ֆիլմ մը հայ բեմադրիչ Աղոմ էկոյեանի կողմէ» «Վատ թուրքեր ընդդէմ բարի հայերու» (Սետաթ Լաչինբեր), եւ այլն:

Թրքական ապստեղեկատուութեան նորագոյն օրինակը հանդիսացող հայկական ուսումնասիրութիւններու հիմնարկին պաշտօնական կայքին հասցէն է՝ www.craren.org:

Կայքին «յօդուածներ» բաժինը կ'ընդգրկէ իրականութիւններ խեղաթիւրող բազմաթիւ ուսումնասիրութիւններ, ինչպէս՝ «Թող պատմաբանները որոշեն» (Յասթըն Աքթարթի), «Հայկական Հարց» (Շիւքրիւն Էլէքտաղ), «Հայկական քրոզիստիկներ Միացեալ Նահանգներու մէջ եւ դեպքան Աճմէտ Ռիւստէմ պէյ» (Պիլալ Շիմշիր), «Հայ ազգային եկեղեցւոյ յաղթանակը եւ ողբերգութիւնը» (Էրիք Ֆէյկըլ), «Այսպէս կոչուած Հայկական Յեղասպանութիւնը՝ օրինական եւ քրոջական դիտանկիւր»:

ՀԱՄԱՑԱՆՑԻ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ՄԻԱՑԵԱԼ ԿԱՅՔ

«Արմիքֆօ» լրատուական գործակալութիւնը 27 փետրուարին հրապարակուած լրատուութեամբ մը յայտնեց, որ Հայաստանի լրագրողներու «Երեւան Փրէս Քլապ»ի ազգերի լրագրողներու «Ենի Նէսիլ» միութեան եւ թուրք դիւանագիտական լրագրողներու միութեան նախաձեռնութեամբ պատրաստուած է www.medialogue.org հասցէով կայք մը, որ պիտի ներկայացնէ հայերը եւ թուրքերը հետաքրքրող նիւթեր եւ շարժական դրութեամբ պիտի վերաթարմացուի:

ԱՇԽԱՐՀԱՀՌԶԱԿ ՍՈՓՐԱՆՕ ԻԶԱՊԷԼ ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆԻ ԿԱՅՔԸ

2000 թուականին Փլասիտո Տոմինկոյի կազմակերպած «Օփերայիա» հանրածանօթ մրցանքի դափնեկիր քանատահայ սոփրանօ Իզապէլ Պայրաքտարեանի համացանցի կայքը շահեկան տեղեկութիւններ կը փոխանցէ երիտասարդ հայուհիին նուաճումներուն մասին միաժամանակ այցելուներուն առիթը ընծայելով ունկնդրելու անոր մեկնարանութիւններէն հատուածներ:



www.bayrakdarian.com հասցէով կայքը կ'ընդգրկէ հետաքրքրական կարգ մը բաժիններ, ինչպէս՝ Պայրաքտարեանի նորութիւնները, անոր կենսագրութիւնը ու նուաճումները, աշխատանքային ծրագիրները, իր մասին միջազգային մամուլին արձագանքները:

Իր, լուսանկարներ, գաղարձներ, ինչպէս նաեւ նազան արձանագրութիւններ, նախորդ համերգներուն անդրամիջոցները:

ՏԱՐԵՂԱՐՁԻ ԼԱԽԱԳՈՅՆ ՆՈՒԷՐԸ

VIDEOԻ ԿԱՍ ՇՈՒ ՎՐԱՅ VIDEO CLIPՆԵՐ

ԱՆՁԻՆ ԱՆՈՒՆՈՎ ԵՒ ՍԱԿԱՆՈՒՆՈՎ

Դիմել՝ ԱՐԱ ԲԵԷԷՃԵԱՆ ՀԱՍ. Ըեռ. 01 / 261696, 03 / 250518

STUDIO Lantern

• Կը ստանձնէ ուրախ առիթներու video

Գկարահանումներ

Ըեռ. 01-268866 Էլ 03-695399

ՀԱՄԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՅՆԵՆ


HAMPIG SASSOUNIAN

CSP - L.A.C. B - 5 - 131 44750

60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 — USA

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՅԵՐ

ՀԱՅԵՐԷՆ ԵՐԳԵՐՈՒ ԲԱՌԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՅՔ ՄԸ



Համացանցին վրայ երգերու բառեր ներկայացնող կայքեր մեծ ժողովրդականութիւն կը վայելին: Յատկանշական է, օրինակի համար, www.lyrics.com կայքը, որ կը ներկայացնէ բազմահազար երգիչներու եւ երաժշտական խումբերու հրապարակած երգերուն բառերը՝ այրբենական շարքով դասակարգուած:


Այժմ համացանցին վրայ տեղադրուած է նաեւ հայերէն երգերու բառերը ներկայացնող կայք մը, որ թէեւ հեռու է www.lyrics.comի համապարփակ ընդլայնումէն, սակայն հետաքրքրական փորձ մըն է հայերէն երգերու բառերը հանրութեան ծանօթացնելու իմաստով:

www.armenianlyrics.com հասցէով կայքը կ'ընդգրկէ զլիւսեր երկու բաժիններ՝ «ազգային յեղափոխական երգեր եւ «ժողովրդային երգեր»:

Այցելուները կրնան նաեւ կայքին մէջ չգտնուող երգերու բառեր ուղարկել hayizavag@hotmail.com հասցէին, որպէսզի անոնք եւս տեղ գտնեն կայքին մէջ:

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՑԱՆՑ (Ա.)

ՀԵՀՈՄԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԿԱՅՔԸ



Հայաստանեայց Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (ՀԵՀՈՄԻ) անգլերէն կայք՝ www.acusa.org, կը բաղկանայ 6 զլիւսեր բաժիններէ:

Ա.- Մեր Մասին բաժինով կը ներկայացուի 1964ին Գարեգին եպ. Սարգիսեանի (հետագային՝ Գարեգին կաթողիկոս ու Ամենայն Հայոց Հայրապետ) նախաձեռնութեամբ հիմնուած ՀԵՀՈՄԻ պատմութիւնը: Այս բաժինով կը փոխանցուի նաեւ ՀԵՀՈՄԻ առաքելութիւնը, գործունէութիւնները (շարքաթորեայ հանդիպումներ, ձեռնարկներ եւ էքլիմեիք) աշխատանքներ, ինչպէս նաեւ՝ Միութեան վարչական կառույցը:

Բ.- Ձեռնարկներ բաժինով ներկայացուած են 2000էն 2002 ՀԵՀՈՄԻ գործունէութեան լուսանկարները եւ ՀԵՀՈՄԻ յառաջիկայ ձեռնարկներուն մասին տեղեկութիւններ:

Գ.- Հայաստան եւ Ղարաբաղ բաժինով հակիրճ կերպով կը ներկայացուի Հայաստանի պատմութիւնը, աշխարհագրութիւնը եւ մշակութիւնը: Յատուկ ենթաբաժին մը յատկացուած է Լեռնային Ղարաբաղին:

Դ.- Հայ Եկեղեցի բաժինը պատկերազարդ կերպով կը փոխանցէ հայ Եկեղեցւոյ հակիրճ պատմական քրիստոնէութեան դարձն մինչեւ 20րդ դար:


Ե.- Լիբանանի յատկացուած բաժինը կը ներկայացնէ Լիբանանի եւ լիբանանահայութեան պատմութիւնը ներկայացնող գրութիւն մը:

Զ.- «Լինք»-ներու բաժինը այցելուները կրնան ծանօթանայ հայ մշակութիւն, Եկեղեցւոյ, Հայ Դատի, ինչպէս նաեւ՝ Լիբանանի համալսարաններու պաշտօնական կայքերուն:

Մանկապատանեկան

ԹԵՅ ԿԸ ԽՄԷ՞Ք

Թեյ խմելը սեզի համար շատ սովորական բան մըն է: Սակայն երկար ժամանակ ան գաղտնիք մըն էր, զոր չիմացիները խստորեն կը պահեին... մինչեւ 19րդ դար, երբ անգլիացի Ռոպերթ Ֆորբրին յաջողեցաւ ձեռք ձգել գայմ: Վտանգաւոր գործ մը, սակայն շատ շահաբեր՝ անգլիական առեւտուրին համար:



19րդ դարուն սկիզբը միայն չինացիները գիտեն թէյի պատրաստութեան գաղտնիքը: Այդ օրերուն արեւմտեան աշխարհը կը սիրահարուի արեւելեան այս համեղ խմիչքին: Անգլիական հզօր կայսրութիւնը կ'ուզէ ձեռք բերել թէյի շահարեւր առեւտուրին վրայ:

ՎԱՃԱՆՎԱԿՆԻ ՄԸ ՀԱՊՈՒՍՆԵՐՈՎ

Ռոպերթ Շանկհայ կը հասնի 1848 թուականին: Ան կը ծպտուի իրրեւ չինացի վաճառական եւ երկու տեղացի մեղսակիցներու հետ կ'երթայ կանաչ թէյի շրջանին մէջ վաճառականութիւնը ընելու: Կառքի մը մէջ նստած՝ ան կը մօտենայ թէյի դաշտերուն եւ ուշադրութեամբ կը դիտէ ինչ տեղի ունեցած աշխատանքները, յատկապէս՝ տերեւները քաղելու եւ գանոնք թէյի վերածելու ձեւերը: Ան կ'ուսումնասիրէ նաեւ այնտեղի հողին բնոյթը եւ կլիմայական պայմանները եւ իր պարզ սեռերակին մէջ կ'արձանագրէ յաւթ թէյի մը պատրաստութեան բոլոր մանրամասնութիւնները:

Այս ձեւով, ան կը նշարէ, թէ խմիչքին

որակը ամէնէն առաջ կախեալ է ջուրի որակէն: Այս կարեւոր կէտը ան կը սորվի պուտրայական քուշան տաճարի վանականներէն, որոնք իրեն կը հրաժարեն շատ համեղ թէյ մը, որ պատրաստուած կ'ըլլայ լեբան աղբիւրի շատ մաքուր ջուրով:

ՄԱՆԱԲՆԸ ԵՒ ՍԵՒ ԹԵՅԵՐԸ

Կանաչ թէյի շրջանը հետախուզելի էր, Ռոպերթ Ֆորբրին կը վերադառնար Շանկհայ պատրաստելու համար իր ճամբորդութեան երկրորդ հազարուանը, դէպի սեւ թէյի արտադրութեան շրջանները: Այս անգամ ան կը ներկայանայ իրրեւ Մոնկոլիայէն եկած մանտարինի մեծ իշխան մը: Սակայն այս անգամ ան շատ աւելի խորհրդապահական ձեւով կը վարուի եւ ճամբայ կ'ելլէ միայն չինացի բարեկամի մը ընկերակցութեամբ:

Ըստ իր սովորութեան, Ռոպերթ կ'այցելէ թէյի գործարանները եւ հետաքրքիր աչքերով կը դիտէ ամէն ինչ: Ապա, բոլորէն գաղտնի, ան մանրամասնօրէն կ'արձանագրէ օրուան ընթացքին իր բոլոր սորվածները: Այս ձեւով իրեն կը պարզուին թէյի պատրաստութեան բոլոր գաղտնիքները՝ քաղելը, թափելը, փաթեթելը, մազելը, եւլլն: Գաղտնիքներու կողքին, իւրաքանչիւր առիթով ան կը փորձէ ձեռք ձգել թէյի բոյսեր:

ՅԱՁՈՎ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

1851 թուականին, երեք տարուան աշխատանքէ ետք, Ռոպերթի առաքելութիւնը վերջ կը գտնէ փայլուն կերպով: Ան կը յաջողի կալիփթալի անգլիացի պատասխանատուներուն դրկել 20 հազար բոյսեր: Միաժամանակ ան կը հասնի Հնդկաստան՝ թանկագին տեղեկութիւններով լեցուցուն տետրակներով, իրեն հետը բերելով չինացի ութսուն հինգ շատ վարպետ թէյը շինողներ: Ռոպերթ Ֆորբրինի քաջագործութեան շնորհիւ, թէյի ցանք կը կատարուի Հիմալայեան լեռներու լանջերուն եւ հետզհետէ անոր արտադրութիւնը կը վերածուի շատ մեծ ճարտարարուեստի:

Շուտով Լիփթրինի եւ թուրքիական Նման մեծ անուներ կը գրաւեն աշխարհի շուկաները՝ թէյը ծանօթացնելով բազմաթիւ ժողովուրդներու:

ԳԻՏԵՒՐ ԹԵ ՔԱՄԵԼԻԱ ՍԻՆԵՆՍԻՍ



Աշխարհի մէջ գոյութիւն ունին թէյի գանազան տեսակի ծառեր, սակայն անոնցմէ մէկը յատկապէս կ'օգտագործուի այժմ ճարտարարուեստին մէջ՝ Քամելիա Սինենսիս: Այս ծառին չինական տեսակը, բնական վիճակի մէջ, 2-3 մետր բարձրութիւն ունի, որ կրնայ ապրիլ մինչեւ 100 տարի: Անոր հնդկական տեսակը կը կոչուի «Ասսամ» եւ կրնայ 20-30 մետրի հասնիլ, սակայն ան կ'ապրի միայն 50 տարի: Մշակուած Քամելիա սինենսիսը 1,50 մետրէն աւելի չի բարձրանար: Մարդիկ գայն կը կտրեն, որպէսզի տերեւներուն քաղելը դիւրին ըլլայ:

ԱՅԼԱԶԱՆ

ՄԵՆՔ ԿՐԻԱՆՔ ԿԱՌԱՐԴԱԿԱՆ ՈՒՃԵՐ ՈՒՆԵՆԱԼ

Ո՛չ, մեզմէ ոչ ոք կրնայ կախարդական ուժ ունենալ: Ո՛չ ոք կրնայ ժամանակը կեցնել, մարդ արարած մը թռչունի վերածել եւ կամ ակնթարթի մը մէջ աշխարհին միւս կողմը գտնուիլ: Այդ բոլորը մագնիսականութեան եւ յայտնատեսութեան հարցեր են, որոնք խոր գիտութիւն եւ ճարտարութիւն կը պահանջեն:




ԸՆԶՈՒՂՏ ՄԸ ՔԱՆԻՔ ՏԱՐԻ ԿՐԻԱՅ ԱՊՐԻԼ

Ընձուղար միջին հաշուով կրնայ ապրիլ 25 տարի: Իր 6 մետր հասակով, ան իր թշնամիները հեռուէն կը տեսնէ: Իսկ երբ վտանգ կը զգայ, ան վազելու կը սկսի եւ կրնայ ժամական մինչեւ 50 քմ. կտրել: Ան յուսահատութեան կը մատնէ նոյնիսկ ամէնէն անօթի առիւծները:



Ո՞ՐՆ Է ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՄԵՍ ԼԻՃԸ

Միւլիէրիէօր լիճը: Ան կը գտնուի Քանատայի եւ Միացեալ Նահանգներու միջեւ: Իր 81 հազար քառ. ֆիւթմետր տարածութեամբ գրեթէ կը հաւասարի Աւստրիոյ: Իսկ անոր երկայնքը կը հասնի մօտաւորապէս 600 քմ.ի:




ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԱՍԻՐԱՅ ԵՂԱՅՐԱԿՅՈՒԹԻՒՆ

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՑ ՍԵՑ ՊԱՇՏՊԱՆ ԾՐՁԱՆԻՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔՆԵՐՈՒ

Շայ Առաքելական Եկեղեցւոյ Եղբայրակցութեան երիտասարդացի պաշտամունքներուն պիտի պատգամեն Սեպտեմբերի 3-ին Կրիստոսի միաբան հայրերը:

- Կիրակի, 3 Մարտ 2002 «Տնտեսի Կիրակի» ժամը 5:30էն 6:30 **ԳԵՐՊ. ՏԵՐ ԶԱՐԱՆ Ե. ԿՐԻ. ՍԱՐԳԻՍԵԱՆ**
- Կիրակի, 10 Մարտ 2002 «Ղազարու Կիրակի» ժամը 5:30էն 6:30 **ՂՈՂԸ. ՏԵՐ ՍԱԿՆԻ ԱՐ. ԱԶԵԱՐԵԱՆ**
- Կիրակի, 17 Մարտ 2002 «Պալատեան Կիրակի» ժամը 5:30էն 6:30 **ՂՈՂԸ. ՏԵՐ ՍԱԶՏՈՅ ԿՐԻ. ԶՈՊԱՆԵԱՆ**


Ժ Ա Մ Ա Ն Յ



Ի՞նչ կը տեսնես երկնքին մէջ: Գիտնալու համար իրարու միացուր այն առարկաները, որոնք իրարու կը յարմարին:



Կրնա՞ս գտնել այս տեսարանին եւ ջուրին մէջ անոր ցոլացումին միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները:



Կրնա՞ս ճանչնալ իւրաքանչիւր ինքնաշարժին վարիչը:



Կրնա՞ս վերի «կորուած» առարկաները վերադարձնել իրենց տերերուն:

Պատրաստե՛ք ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

ONE SECOND IS ENOUGH...
Արագը Կը Պատահէ Երկվայրեան Մը Մէջ...

...BUT WE USE THEM ALL.
...ԻՍԿ ՄԵՆԵ ՆԵՐԿԱՅ ԵՆԵ ԱՄԷՆ ԵՐԿՎԱՅՐԵԱՆ.

ԱՏՅԻԼ AFHIL

Աֆտու-ի Ընթ. Բ. Յարկ, Գեմ. Ե. Ֆարս. (01) 262231-242556-242557
Կոմ. AFED, 24me étage, Tél. and Fax: (01) 262231-242556-242557

Հ.Բ.Ս. Հ.Ե.Ը.
Վ. ՓԱՓԱԶԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԲԸ
Կը Գերկայացնէ՝
ԷՏՈՒԱՐՏՕ ՏԸ ՖԻԼԻՓՓՕԻ
«ԵՐԵՒԱՆԵՐԸ ԿԸ ՄԱՂԻ ԵՐԵՒԱՆԵՐ»
ԲԵՍԱԿՐՈՒԹԵԱՄԲ՝
Հ. Հ. Արուեստի վաստակաւոր գործիչ,
Պետական մրցանակի դափնեկիր՝
ՓՐՈՑ. ԵՐՈՒԱՆԵՐ ԴԱԶԱՆՃԵԱՆԻ
Տեղի կ'ուսնան 1,2,3,7,8 (Կալա),
9, 10 Մարտ 2002, Երեկոյեան ժամը
ձիշո 8:30ին, «Յակոբ Տեր Մելքոնեան»
թատերասրահին մէջ:

www.homenetmencentral.com

ՀՐԱԽԵՐ

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Բ Ն



ԼԻԲԱՆՆԵՐԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ԱՆՈՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՂԸՆԵՐԻ ՆԵՐՏՄԵ - Հ.Մ.Ը.Մ. ՍՊԱՍՈՒԱԾ ԴԱԿԱՏՈՒՄԸ

20 օրուան արձակուրդէ մը ետք, այսօր՝ Շաբաթ, 2 Մարտին կը վերսկսին Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան մրցումները, երբ տեղի կ'ունենան 14րդ եւ դարձի առաջին հանգրուանի ճակատումները:

13րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումները տեղի ունեցան Կիրակի, 10 Փետրուարին, որոնցմէ ետք Սաժէն հանդիսացաւ աշխարհ ախոյեան, 30 կէտով գրավելով պարագուլիի դիրքը:

Ետդարձ ակնարկ մը կատարելով, նշենք, թէ առաւելագոյն յաղթանակը արձանագրած է Սաժէն (9), իսկ նուազագոյն պարտութիւնը կրած են՝ Նըժմէ, Թատամն Սուր եւ Նոյնիքն՝ Սաժէն (1): Լաւագոյն յարձակողականը ունի Սաժէն (32 կոյ), իսկ լաւագոյն պաշտպանողականը՝ Նըժմէ (10 կոյ):

Վերադառնալով դարձի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան երեք ճակատումներ, իսկ վաղը՝ չորս:

Վաղուան մրցումները պիտի ըլլան աւելի հետաքրքրական քան այսօրուան հանդիպումները: Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի ներկայացուցչական խումբը դարձի իր առաջին մրցումը պիտի կատարէ վաղը՝ Կիրակի, Նըժմէի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ Մարպական Աւանի դաշտին մէջ, ժամը 2:45ին:

Լաւագոյն պարտատուելու համար դարձի մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի խումբը մեկնեցաւ Թրիփոլի տասը օրուան բանակավայր մը կատարելու համար: Խումբը տակաւին կը մնայ հոն, հակառակ անոր որ այսօր կը սկսին դարձի մրցումները: Անոնք հիւսիսէն Պէյրութ կը վերադառնան վաղը՝ Կիրակի, ուղղակիօրէն ուղղուելու Մարպական Աւան, ճակատելու համար Նըժմէի դէմ:

10 օրուան բանակավայրին ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները իրենց կատարած փորձերուն ընթացքին, հետեւելով իրենց մարզիկներին՝ Նիքոլայ Աուտալի ցուցմունքներուն, բաւական լուրջ աշխատանք տարին փայլուն արդիւնքներ արձանագրելու համար դարձի մրցումներուն եւ պայտօրէն աւելի տոկոս կապուածքով դաշտ պիտի ներկայանան դարձի մրցումներուն, խումբին համակիրներուն եւ Լիբանանի ֆուտբոլիստներ հասարակութեան յիշեցնելով Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտբոլի անցեալի փառքի օրերը:

Այս իրողութիւնը պիտի վաստակ վաղը՝ Կիրակի, Նըժմէի դէմ տեղի ունենալիք մրցումին, որուն ընթացքին Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները պիտի ողորդեն դաշտը, մրցակից կապուան համակիրներուն յիշեցնելով, որ իրենց խումբը առանձինն չէ:

Բոլորին վաղուան ժամադրավայրը պիտի ըլլայ Մարպական Աւանը, ուր իրարու դէմ պիտի ճակատին լիբանանեան ֆուտբոլիստներ մէջ իրենց անունը արձանագրած Նըժմէ եւ Հ.Մ.Ը.Մ.:

Ստորեւ՝ 14րդ եւ դարձի առաջին հանգրուանի մրցումներուն յայտագիրը:

ԱՅՍՕՐ	ԺԱՄ	ԳԼՇՏ
Ա.Սալտա - Շ.Սահէլ	2:45ին	Սուր
Ռասիկ - Սաժէն	2:45ին	Պ. Համուտ
Ախա Ալէյ - Պըրժ	4:45ին	Պէյրութ
ՎԱԳԸ		
Սաֆա - Հ.Մ.Ը.Մ.	2:45ին	Սաֆա
Նըժմէ - Հ.Մ.Ը.Մ.	2:45ին	Ս. Աւան
Թ. Սուր - Անսար	2:45ին	Սուր
Ահտ - Սալամ	4:45ին	Պէյրութ

Այժմ դասաւորումը կը ներկայացնէ հետեւեալ պատկերը:

ԽՈՒՄԸ	Մ.	Յ.	Հ.	Պ.	Ն.Շ.	ՍՏ.	ԿԵՏ
1.- Սաժէն	13	9	3	1	32	21	30
2.- Նըժմէ	13	8	4	1	28	10	28
3.- Շ. Սահէլ	13	7	3	3	22	16	24
4.- Սաֆա	13	7	2	4	24	16	23
5.- Թ. Սուր	13	5	7	1	26	12	22
6.- Ախա	13	7	1	5	18	15	22
7.- Սալամ	13	6	3	4	19	14	21
8.- Ահտ	13	5	5	3	19	16	20
9.- Պըրժ	13	5	4	4	22	21	19
10.- Անսար	13	4	4	5	16	19	16
11.- Հ.Մ.Ը.Մ.	13	2	4	7	16	25	10
12.- Ա. Սալտա	13	2	2	9	12	28	8
13.- Հ.Մ.Ը.Մ.	13	-	3	10	9	24	3
14.- Ռասիկ	13	-	3	10	8	34	3

ԼԵՎԱՄ

ՄԻՆԻ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՅԱՅՏԱԳԻՐ

Շարժավերջին, Լ. եւ Ս. Յակոբեան քոլէճի դաշտին վրայ տեղի կ'ունենայ Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՄի միջի ֆուտբոլի մրցումները՝ հետեւեալ յայտագիրին հիմամբ:

ՇՈՒԲԹ. 3 ՄԱՐՏ	ԺԱՄ
Ա. Խանգամիսեան - Գպրեվանք (փոքր)	2:30
Լ. եւ Ս. Յակոբեան - Յառաջ (փոքր)	3:00
Ս. Բառասնից Մանկանց - Ճեմարան (փոքր)	3:30
Ճեմարան - Գպրեվանք (մեծ)	4:00
Թոնցնոց Բոյն - Գ. Չարալպաշեան (փոքր)	4:45
Թորոսեան - Շամկեան - Թաթիկեան (փոքր)	5:10
Լ. եւ Ս. Յակոբեան - Շամկեան - Թաթիկեան (մեծ)	5:40

ԿԻՐՈՎԻ. 4 ՄԱՐՏ	ԺԱՄ
Ա. Խանգամիսեան - Թորոսեան (փոքր)	2:30
Ս. Հոնիփսիմեանց - Յովակիմեանց (մեծ)	3:00
Ս. Հոնիփսիմեանց - Հայ Աւետ. Թրատ (փոքր)	3:40
Ա. Խանգամիսեան - Սրբուհի Ազնէս (մեծ)	4:10
Մեարպեան - Սրբուհի Ազնէս (փոքր)	4:50
Մեարպեան - Թորոսեան (մեծ)	5:20

ԹԵՔՈՒԱՆՏՕ

ՇԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ 5 ՄԵՏԱԼՈՎ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԻՐԱՆԵՆ

Անցնող քանի մը օրերուն ընթացքին, Թեհրանի մէջ (Իրան) վերջ գտաւ իսլամական յեղափոխութեան նուիրուած թէքուան-նոյի միջազգային մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 16 երկիրներու 20 խումբեր, որոնց հինգը՝ Իրանն է:

Հայաստան, որ իր մասնակցութիւնը կը բերէր 10 մարզիկներով, յաջողեցաւ միայն պրոնկ մետալի մը տիրանալ, այդ ալ շնորհիւ Վարդան Վարդանեանի, 72 քկ. դասակարգին մէջ:

Հայրենի մարզիկները իրենց մասնակցութիւնը բերին նաեւ Թեհրանէն ոչ շատ հեռու գտնուող Բարաք քաղաքին մէջ տեղի ունեցած թէքուանոյի մէկ մրցաշարքին: Հայաստան շահեցաւ երկու արծաթ եւ երկու

պրոնկ մետալներ եւ մրցաշարքը աւարտեց 2րդ դիրքին վրայ: Մէկ արծաթ եւ մէկ պրոնկ մետալներ շահեցաւ Լեւոն Դոնիսեան (84 քկ.), իսկ նոյն քանի իրագործեց՝ Արման Երեմեան (78 քկ.):

Թեհրանի մէջ վերջ գտաւ նաեւ նոյն առիթով տեղի ունեցած պատճառով մրցաշարքի մարտի միջազգային մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 13 երկիրներէ ժամանած 180 մարզիկներ:

Հայաստան, որ իր մասնակցութիւնը կը բերէր տասը մարզիկներով, յաջողեցաւ գրաւել միայն 3րդ, 4րդ եւ 6րդ դիրքերը, ինչ որ բնարար չէր ընդհանուր դասաւորման մէջ դիրք մը ապահովել: Մարտին Պէրպէրեան հանդիսացաւ 3րդ, Արմէն Միսի-

թարեան՝ 4րդ, իսկ Բագրատ Բարսեղեան՝ 6րդ:

ՅԱՌԱՋԻԿԱՅ Մալիսին, Պաքուի մէջ տեղի պիտի ունենայ Երոպայի պատճառով ըմբշամարտի ախոյեանութիւնը:

Հարցական կը մնայ, թէ արդեօք հայրենի մարզիկները իրենց մասնակցութիւնը պիտի բերեն այս մրցաշարքին: Անցեալ տարի Պաքուի մէջ տեղի ունեցած Երոպայի ախոյեանութեան մրցաշարքին հայրենի բոնցքամարտիկները չէին մեկնած Սպրայէջան:

Նոյնն է պարագան նաեւ Ապրայէջանի մարզիկներուն, որոնք իրենց մասնակցութիւնը չեն բերել Հայաստանի մէջ տեղի ունեցած միջազգային մրցաշարքերուն, որոնց կարգին՝ ուշու, ճատրակ եւ այլն:

ՖՈՐՄԱԿԱՆ 1

ՎԱՂԸՆԵՐԻ ԱԻՍՏՐԱԼԻՈՅ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Վաղը՝ Կիրակի, Մելպուռնի մէջ (Աւստրալիա) կը սկսի Ֆորմալիս 1ի աշխարհի ախոյեանութեան 2002 թանակը, երբ տեղի կ'ունենայ տարուան առաջին կրան փրին:

Աւստրալիոյ մէջ տեղի ունենալիք այս կրան փրին նախօրէնակին, երէկ տեղի ունեցան ոչ պաշտօնական փորձերը, որոնց ընթացքին Ֆեռարիի վարորդ գերմանացի Միքայէլ Շումախըր անգամ մը եւս փաստեց, որ կը մնայ անգերապանցելի, թէեւ անոնք այդքան ալ մեծ նշանակութիւն չունին: Հակառակ

անոր որ Շումախըր, իր անցեալ տարուան հին Ֆեռարիով հանդիսացաւ առաջին արձանագրելով մէկ վայրկեան 27" 276 արդիւնք մը, սակայն կարելորդ այսօրուան փոլ-փոլի շրջանին մէջ մրցումներն են, որոնք տեղի կ'ունենան առաւելու կանոնադրութեան (ժամը 5:00ին): Շումախըրի ետին երկրորդ դիրքը գրաւեց Ֆեռարիի երկրորդ վարորդը, պրապիլի Ռուպէնս Պարիքելլո, որ արձանագրեց մէկ վայրկեան 27" 799 արդիւնք մը: Շումախըրի եղբայրը՝ Ռալֆ (Ռիլիքմ) հան-

դիսացաւ երրորդ, արձանագրելով 1 վայրկեան 28" 821 արդիւնք մը:

Փոլ-փոլի շրջանի մրցումներուն նման, առաւելու կանոնադրութեան վաղը՝ Կիրակի ժամը 5:00ին, տեղի պիտի ունենայ Աւստրալիոյ կրան փրին, որուն երկարութիւնն է 307, 574 քմ. եւ կ'ընդգրկէ 58 լէփ:

Առ ի յիշեցում, նշենք, թէ անցեալ տարուան փոլ-փոլի շրջանի մրցումներուն առաջին դիրքը գրաւած էր Միքայէլ Շումախըրը եւ ապա շահած էր այս կրան փրին:

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ՖՈՒԹԳՈՒԼԻ ՄՐՅԱՇԱՐՔ

ԼԻՈՆ, ՓԱՐՄԱ ԵՒ ԼԻԾ ԴՈՒՐՍ ՄՆԱՅԻՆ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա. Ի ֆուտբոլի մրցաշարքին Դ. հանգրուանի դարձի մրցումներուն արձանագրութեան անակնկալներ, որոնց ընթացքին համետակապներ անակնկալի բերին համեմատաբար աւելի չորսուր նկատուող խումբերը, մինչ ուրիշներ դժուարութեամբ ապահովեցին քառորդ աւարտականին իրենց տոմսերը:

Մեծագոյն անակնկալը ստեղծեց Սլովան Լիպեթէ (Չեխիա), որ Փրակայի մէջ 4-1 արդիւնքով պարտութեան մատնեց Լիոնը (երթ՝ 1-1): Ֆրանսական երկրորդ եւ վերջին խումբը՝ Լի, իր կարգին դուրս մնաց 0-0 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրելէ ետք Պորուսիա Տորթմունտի հետ: Երթին, Ֆրանսայի մէջ 1-1 արդիւնքով հաւասարութիւն մը արձանագրեցին Լիոնը (երթ՝ 1-1):

նագրած Տորթմունտ օգտուեցաւ օտար դաշտի մէջ կոլ նշանակելու առաւելութեան:

Լիծ իր դաշտին վրայ 1-0 արդիւնքով մը կրելէ ետք Փ. Ս. Վ. Այնտոնովընէն՝ դուրս մնաց մրցաշարքէն (երթ՝ 0-0) Ա. Սէ. Միլան փե-

նայթիներով միայն (3-2) յաջողեցաւ պարտութեան մատնել Ռոտա Քերքրատէն (Հոլանտա):

Փարմա իր դաշտին վրայ 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրելէ ետք Հափոնի Թէլ Ալիէն, դուրս մնաց մրցաշարքէն (երթ՝ 0-0):

Ստորեւ՝ դարձի մրցումներուն արդիւնքները (փակագիծին մէջ նշուած են երթի մրցումներուն արդիւնքները):

Սլովան Լիպեթէ (Չեխիա) - Լիոն (Ֆրանսա) 4-1 (1-1)
Փարմա (Իտալիա) - Հափոնի Թէլ Ալի (Իտալիա) 1-2 (0-0)
Ֆէյէնուրտ Ռոթերտամ (Հոլանտա) - Ռէյնստրոպ (Սլովակիա) 3-2 (1-1)
Սերվէթ (Չեխիացի) - Վալենսիա (Սլովակիա) 2-2 (0-3)
ԱԷԲ Սթէնք (Յունաստան) - Ինթեր Միլան (Իտալիա) 2-2 (1-3)
Պորուսիա Տորթմունտ (Գերմանիա) - Լի (Ֆրանսա) 0-0 (1-1)
Լիծ (Սլովակիա) - Փ. Ս. Վ. Այնտոնովըն (Հոլանտա) 0-1 (0-0)
Ա. Սէ. Միլան (Իտալիա) - Ռոտա Քերքրատէ (Հոլանտա) 0-1 (1-0)
(Ա. Սէ. Միլան փենսիլիներով՝ 3-2 յաղթական)

ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՇԱՐՔԱՎԵՐՁԸ

- ԱՅՍՕՐ՝ ՆԻԷՔԵՍԸԼ - ԱՐՍԵՆԱԼ - ՎԱՂԸՆԵՐԻ ՄԻԼԱՆՈՅԻ ՏԵՐՊԻՆ

Շարժավերջին, Երոպայի մէջ տեղի կ'ունենան Գերմանիոյ (Պունտրալիկա), Անգլիոյ, Իտալիոյ (Քալչիո) եւ Սպանիոյ ֆուտբոլի ախոյեանութեան մրցումները, որոնք արդէն իսկ կտրած են բաւական կարեւոր հանգրուան մը, բայց տակաւին պայքարը կը շարունակուի խումբերուն միջեւ առաջնակարգ դիրքերու տիրանալու համար:

Գրեթէ վերնաշէն երկիրներու ախոյեանութեան մրցումներուն ընթացքին, պարագուլիսի դիրքերը միշտ ալ կ'ենթարկուին փոփոխութիւններու:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ֆուտբոլի ախոյեանութեան (Պունտրալիկա) 25րդ հանգրուանի մրցումներուն, առաջին երկու դիրքերը գրաւող խումբերը՝ Պայէր Լէյքըրուզը եւ Պորուսիա Տորթմունտ, որոնք միայն մէկ կէտի տարբերութեամբ իրարմէ հեռու են, չորսուր մրցումներ չունին կատարելիք:

ԱՆԳԼԻՈՅ ֆուտբոլի ախոյեանութեան 28րդ հանգրուանի գագաթի ճակատումը՝ Նիւքասթլի եւ Արսենալի միջեւ տեղի կ'ունենայ այսօր: Պարագուլիսի դիրքը գրաւող Մանչեսթըր Եունայթըտ բաւական հանգիստ մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ նախապէս իր դիրքը գրաւող Տերսի Բառնֆիլդը:

ԻՏԱԼԻՈՅ ֆուտբոլի ախոյեանութեան (Քալչիո) 25րդ հանգրուանի գագաթի եւ սպասուած ճակատումը տեղի պիտի ունենայ վաղը՝ Կիրակի, ուր «Սան Սիրօ» մէջ Միլանօ քաղաքի երկու կապները պիտի ճակատին իրարու դէմ, տերպիլի այս մրցումին:

Ա. Էս. Ռոմա հանգիստ մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ վաստագաւոր դիրքի վրայ գտնուող Լէչէի դաշտը:

ՍՊԱՆԻՈՅ ֆուտբոլի ախոյեանութեան 28րդ հանգրուանի մրցումներուն, պարագուլիսի դիրքը գրաւող հիւրը պիտի ըլլայ Ռէալ Մարակոսայի (15րդ), մինչ 2րդ դիրքը գրաւող Ռէալ Մարտիա քիչ մը դժուար մրցում մը ունի կատարելիք, երբ այցելէ Սելթա Վիկոյի դաշտը (6րդ): Պարսելոնա (5րդ), որ պիտի հիւրընկալէ Մալայան (12րդ), պիտի փորձէ անպայման յաղթանակ մը արձանագրել, մոռնալով իր վերջին ճակատումները:

ՍՊՈՐՏԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՎԵՐՁԻ ՄՐԿՈՒՄՆԵՐՈՒՆ ԵՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹԳՈՒԼԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ

ՊՈՒՆՏԸՍԼԻԿԱ (25րդ հանգրուան)
● ԱՅՍՕՐ (ժամը 16:30ին)
Շրուքիարթ - Պայէր Միլանիս
Քեօլս - Հերթա Պերլին
Համպուրկ - Նիւրնպէրկ
Պորուսիա Մէնչենգլապա - Կերտըր Պրեմը
Յրայպուրկ - Պայէր Լէյքըրուզը
Քոքսուս - Շալք
1860 Միլանիս - Հանպա Ռոստը

● ՎԱՂԸ (ժամը 18:30ին)
Պորուսիա Տորթմունտ - Չանքթ Փաուլի
Քայլըրսլաուրըրն - Վոլֆսպուրկ

ԱՆԳԼԻԱ (28րդ հանգրուան)
● ԱՅՍՕՐ (ժամը 17:00ին)
Ասթոն Վիլա - Ուէսթ Համ
Պոլթըն - Պլէյքըրն
Չարլթըն - Չէլսի
Ֆուլհէմ - Լիվըրպոլ
Իփսուիչ - Սաութհէմթըրն
Միտ

